

ՈՒԾ ՄԻԶՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ուշ միջնադարի հայ պատմագրութիւնը իր գոյութեամբ անգամ վկայագրուած էր ժանրային եթէ չասենք՝ ոչնչացում-քայքայում, ապա գոնէ՝ անկում: Ժանրային նկարագրի տեսանկիւնից այս շրջանը հայ պատմագրութեան ամենաթոյլ ժամանակահատուածն է: Ի հարկէ, ստեղծուող աշխատութիւններից չատերը յատկանշուած են պատմագիտական մեծ արժէքով, որպէս սկզբնաղբիւր յետագայում մեծ դեր են խաղացել պատմական տարբեր իրադարձութիւններ ներկայացնելու, գնահատելու եւ արժեւորելու տեսանկիւնից: Սակայն պատմագրութեան, իբրեւ ժանրաձեւի, այն տարտղնումները, որ նկատելի էին դեռեւս ԺԲ. դարից, ԺԸ. դարում վերջնականապէս գալիս են հաստատուելու ժանրի, ըստ էութեան, անախրոնիկ կարգավիճակը: Պատմական նիւթի եւ գեղարուեստական ընդհանրացման այն փայլուն ներդաշնակութիւնն ու համադրութիւնը, որով յատկանշուած էր յատկապէս Ոսկեդարի հայ պատմագրութիւնը, հետզհետէ իր տեղը զիջեց փաստի, տեղեկութեան սոսկական փոխանցման կարեւորութեանը՝ ժանրը յաճախ վերածելով պարզ ժամանակագրութեան:

Հայր Ղեւոնդ Ալիշանը, ահա, աչքի առաջ այս պատկերն ունենալով է շարադրել «Հայապատում»ի առաջին՝ «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» հատորը, որտեղ էլ եւ տալիս է իր գնահատումները հայ պատմագրութեանն ու պատմիչներին:

Այն հանգամանքը, որ Հայր Ալիշանն առանձնապատուկ տեղ է յատկացնում պատմագրութեանը եւ ըստ էութեան համարում մեր դպրութեան բարձրակէտերից մէկը՝ «Մեր ազգային Դպրութեան աւանդից մէջ հաճոյագոյնն եւ իսկագոյնն՝ իր Պատմագիրքն են, որք եթէ եւ հասած չըլլան ի մարտարութիւն եւ ի բարձրութիւն քանի մը մատագրաց եւ երգողաց (Շարականաց), սակայն եւ ոչ շատ վար կամ

հեռու մնան»¹, բնականաբար, նախեւառաջ թելադրուած է Ոսկեդարի պատմագրքերի առթած տպաւորութիւնից եւ յատկականութիւններից: «Հայապատում»ում ամենատարբեր առիթներով Հայր Ալիշանը խոստովանում եւ արձանագրում է դա: Ուստի, հաշուի առնելով, որ ուշ միջնադարի հայ պատմագրութիւնը հագուադէպ այսպէս ասած՝ համընկնումներ ունի Ոսկեդարի պատմագրութեան հետ, բնական է, որ Հայր Ալիշանի գնահատողական-մեկնաբանական-ընտրողական խօսքն էլ նրա շուրջ սակաւ է, կամ ըստ համընկնումների է:

Միւս կողմից՝ ինչպէս ինքը՝ Հայր Ալիշանն է նշում, «Հայապատում»ը իր բնոյթով միտուած է նախեւառաջ մաշակ ի ցոյց դնելու՝ «հեղինակաց գրածներէն ընտրանօք հատուածներ քաղել՝ յօրինակ եւ ի մաշակ աշակերտաց եւ քանասիրաց»²: Ուստի, պատմութիւնների եւ պատմիչների ընտրութիւնն էլ, հետեւաբար՝ անուղղակի գնահատում-արժեւորումը թելադրուած է այս հանգամանքով: «Ոչ ամէն տեսակ գրուածներէ ընտրեցի այս մաշակներս, այլ ի Պատմչաց զասոմք հանդագոյն համարելով յընթերցումն քան զայլս»³: Այս դիտանկիւնն էլ պայմանաւորում է «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» գրքի բովանդակային եւ ժամանակադրական ընդգրկումը: Ընդ որում՝ Հայր Ալիշանի մօտեցումներն այստեղ էլ խիստ են եւ իւրովի պատճառաբանուած. «....ընտրեցի ժամանակագրական կարգի մի պատմութեան քան Պատմչաց, թէ եւ շատ տեղ գուց ընթանան ժամանակք Պատմչաց եւ Պատմութեան. եւ ո՛ր եւ է կերպով չի խափանուիր հեղինակաց լեզուի եւ ռեպ գանգամութիւնն»⁴: Պատմիչների եւ պատմագրական երկերից նիւթերի ընտրութիւն-առանձնացումի հատոյթում Հայր Ալիշանը կարեւորում է մաշակաւոր լեզուի ու բովանդակութեան առկայութիւնը պատմագրքերում, «գերագոյն հայկաբանութիւնը», եւ այդ առումով է, որ իր խօսքով՝ «օրինաւոր պատմչաց» ժամանակագրութիւնը նա հասցնում է ժէ. դար: «Ասկէ վար, - գրում-պատճառաբանում է նա, - միայն մի քանի Յօդուածք կան, զի կա՛մ Առաքել Դարբիժացոյ գրածէն են՝ որ մեր վերջին օրինաւոր Պատմիչն կրնայ համարուիլ, կա՛մ կարեւոր դիպուածք են եւ հնագոյն պատմչաց ըսածը պարզեն կամ լրացնեն: Վեր-

1 ԱԼԻՇԱՆ ՂԵՆՈՆԻ, Հայապատում: Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց, հատոր Ա., Վեներտիկ 1901, էջ Ը.-Թ.:

2 Անդ, էջ Ժ.:

3 Անդ:

4 Անդ, ընդգծումը մերն է - Ա. Ն.:

ջին երեք դարուց (ԺԷ., ԺԸ., ԺԹ.) գրողները թողի, զի ընդհանրապես անոն եմ, եւ լեզունիմ շատ խանգարուած»⁵:

Եթէ այս բոլոր մէջբերումներն ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ Հայր Ղեւոնդ Ալիշանի մօտ ուշ միջնադարեան պատմագրութեան գնահատութիւնը, որպէս այդպիսին, բացակայում է, կամ յանգում է որոշակի ժխտողականութեան կամ մերժման՝ ճշակի ու լեզուի գերակայ ըմբռնմամբ: Միւս կողմից՝ եթէ խնդրին նայենք ոչ առարկայական կամ յստակ արժեւորման տեսանկիւնից, ապա պէտք է նշել, որ ուշ միջնադարեան Հայ պատմագրութեան ըստ էութեան գնահատման բացակայութիւնը եւ «Հայաբանութեան ըստ էութեան գնահատման բացակայութեան-գնահատում»-ի երեք հատորներում սփռուած մեկնաբանական-գնահատողական հայեացքը նախորդ դարերի Հայ պատմիչների ու պատմագրական երկերի մասին, իւրովի գնահատական են ուշ միջնադարեան Հայ պատմիչներին ու պատմագրական երկերին: Այլ խօսքով՝ Հայր Ալիշանը լուծեամբ ու անտեսումով, նախորդ դարերի պատմագրական երկերի գնահատումով է արժեւորում ուշ միջնադարեան Հայ պատմագրութիւնը:

Ընդհանրապէս, «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» հատորի պարագծում Հայր Ալիշանի գնահատողական համակարգը ըստ էութեան կարելի է բաժանել երկու հատոյթի. ա) ուղղակի եւ անմիջական գնահատում-արժեւորումներ եւ բ) տեքստընտրութիւն եւ վկայակոչում:

Ուղղակի եւ անմիջական գնահատում-արժեւորումների հատոյթում ըստ էութեան միակ շատ բարձր գնահատականի արժանացած ուշ միջնադարեան Հայ պատմիչը Առաքել Դաւրիժեցին է: «Յետ կանոնաւոր Պատմչաց ԺԳ. դարու եւ ԺԴ.-ին սկզբան, արժանաւոր պատմիչ մի չէ հասած մեզ յետագայ դարերուն՝ մինչեւ ի սա, որ թէ՛ իրմէ առջի երկու երեք դարուց պատմիչներէն եւ թէ՛ իրմէ վերջնոց ամենէն լաւագոյնն է եւ կ'արժէ օրինաւոր Պատմչաց դասակցել»⁶: Հայր Ալիշանը Դաւրիժեցու հանդէպ էլ, անշուշտ, որոշակի վերապահութիւն ունի, «հայաբանութեամբ ստորին է», - գրում է նա, բայց եւ միաժամանակ յաւելում՝ «բայց կարգաբանութեամբ գովելի»⁷: Ահա այս վերջին հանգամանքն էլ Հայր Ալիշանի գնահատողական խօսքի մեկնակէտն է:

5 Անդ, էջ Ժ.-ԺԱ., ընդգծումը մերն է - Ա. Ն.:

6 Անդ, 331:

7 Անդ:

Եւ եթէ Զաքարիա Քանաքեռցու (Հայր Ալիշանի մօտ յիշատակուած է որպէս Զաքարիա կամ Զակէքոս սարկաւազ) դէպքում առանձնապատուկ արժանիքներ չեն ընդգծուում, ապա Մաղաքիա Դպիրն էլ, ըստ հուլիան, կարեւորուում է այն փաստով, որ ըստ Հայր Ալիշանի «կրնայ կոչուիլ վերջին ի Պատմագիրս մեր, ոչ ընդարձակ գրութեամբ երկար կամ կարճ ժամանակի դիպուածոց, այլ համառօտ ազգային յիշատակօք բովանդակ ժամանակի, այսինքն ժամանակագրութեամբ»⁸:

Ուշ միջնադարի միւս պատմիչներին Հայր Ալիշանը ներառել է «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց»-ի «Յաւելուած»ում: Յաւելուած տանելու պատճառաբանութիւնը, ըստ ամենայնի, ուշ միջնադարեան հայ պատմագրութեան ալիշանեան բնութագիրն է ինքնին եւ նրա գնահատողական ըմբռնումների հանրագումարը՝ անշուշտ, որոշ բացառութիւններով: «Յետին երկուց դարուց, այսինքն՝ Ութնտասներորդի եւ Իննետասներորդի, ազգային պատմագիրք՝ մեր նպատակին չեն ծառայեր, մանաւանդ որ շատքն յստակ հայերէն այլ չեն գրեր»⁹: Ոճը, լեզուն, ճաշակը մինչեւ վերջ շարունակուում են մնալ թերադրող Հայր Ալիշանի ըմբռնումներում՝ առանց չնչին իսկ զիջումների:

Տեքստընտրութեան եւ վկայակոչման հատոյթում, ահա, այդ տրամաբանութեամբ ուշ միջնադարեան պատմագրութիւնը գրեթէ տեղ չունի: Տեքստերի մէջբերման առումով՝ գրեթէ միակ գնահատականի արժանացած պատմիչը կրկին Առաքել Դաւրիժեցին է, որի «Գիրք պատմութեանց» աշխատութիւնից «Հայապատում»-ում ներառուել են «Դարձ աջոյ Լուսաւորչին յԱղթամարայ», «Հնարք յունաց առ ի գողանալ գոսկերս վարդ Պատրկի», «Տարագրութիւն ջուղայեցոց ի Սպահան», «Նորոգութիւն անապատական կենաց ի Հայս», «Սասանութիւն մեծի անապատին» վերնագրով գլուխները¹⁰:

Ամփոփելով, նշենք, որ ուշ միջնադարեան հայ պատմագրութիւնը, վստահաբար, Հայր Ղեւոնդ Ալիշանի քմահաճ ու խիստ ճաշակին եւ հիմնաւոր գիտելիքին չէր բաւարարում: Ուստի, ընդհանրութեան մէջ Հայր Ալիշանը գուցա արժեւորումներով եւ հպանցիկ գնահատումներով, աւելի շատ անտեսելով է անցնում ժանրի զարգացման այս ժամանակահատուածի կողքով:

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

8 Անդ, 338:

9 Անդ, 339, ընդգծումը մերն է - Ա. Ն.:

10 Տե՛ս ԱԼԻՇԱՆ ՂԵՒՈՆԴ, Հայապատում: Պատմութիւն Հայոց, Խառն Գ., վննութիւ 1901, 238-241, 282-284, 324-330, 335-341, 355-359:

Summary**FR. GHEVOND ALISHAN AND
THE HISTORIOGRAPHY OF THE LATE MIDDLE AGES****ARKMENIK NIKOGHOSYAN**

The article examines the analyzes and assessments of Father Ghevond Alishan, given to the representatives of the Armenian historiography of the late Middle Ages.